

Չունիս այլ եւս ոչ հրապոյր, ոչ քաղցրութիւն ինձ
համար,

Խաբուսիկ եւն վայելցնէրդ եւ վաղանցուկ, ո՛վ աշխարհ.

Ջգուելի է քո պատկերը, թէ եւ շէն, ոսկեգոյն,

Դիմակիդ տակը ոսկեգոծ տեսնում եմ եւ մահ եւ բոյն:

Քեզ չեն յուզում ուրիշների արցունքն ու վիշտն, ո՛վ
աշխարհ,

Թէկուզ արեան գետե՛ր բոխին, դու կը ժպտիս հեզ-
մաբար.

«Ճշմարտութիւն», «անձնուրաց սեր», «արդարութեան
շատագոյն» —

Այս խօսքերը կարտասանեաւ դու միշտ ծաղր ու ծա-
նակով:

Ոսկին միայն, մի՛այն ոսկին արժեք ունի քո աչքում,
Իսկ ինչ քան որ զուրկ է ոսկուց, դու անպէ՛տ եւ
հոշակում.

Ոսկու համար հայրը որդուն վաճառում է, որդին՝ հօր,
Դստեր պատուի առեւտրով ապրում է մայրն անողորմ.

Ոսկու համար վաճառում է կրօն, եւ խիղճ, եւ Աս-
տուած,

Ոսկուն տրուած պատիւը դէռ Աստծուն էլ չի տրուած.

Եւ տեսնում ես ու չես ստանում. յունիս պատիժ, հոր,
կարկուտ,
Թո՛ղ, ասում ես, թող հաշածուին ճշմարտութիւն,
սէր եւ գութ:

Բայց ա՛յլ ուղի, ա՛յլ նպատակ դրել էր նա մեր առաջ,
Նա՛ որ աղբիւրն է մեր կեանքի եւ ղեկավարը մեր
խաչ.

Զուր շնորհացար նորա գծած միակ շաւղից ապահով,
Որպէս մի նաւ կը խորհակուիս ե՛ւ անկենդան ե՛ւ ահով:

Գողգոթայի ճանապարհին, ուր խաչն է լոկ կանգ
առել,

Այն խաչը որ վշի, սիրոյ արցունքով է ողողուել,
Չկար հրապոյր, ոչ վառք, պատիւ, ոչ էլ ոսկու գութ
տենջանք,

Միայն հառաչ, հեծութիւններ, արիւն, արցունք ու
տանջանք:

Երբ տեսնում եմ արդարութեան հաշածուելը քո գրկում,
Երբ տեսնում եմ, որ դու խեղճին չես պաշտպանում
այլ գրկում,

Ես սիրում եմ պաշտել Փրկչիս արտաւած անշուք
Խաչ,

Քան, ո՛վ աշխարհ, հպարտ ոսկուդ գալ ծերադիր ընդ
առաջ: